ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Հոդված 1. «Հրապարակային սակարկությունների մասին» 2003 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-15-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածում՝

1) 1-ին մասից հանել «և հարկադիր աճուրդների» բառերը.

2) 5-րդ մասից հանել «, բացառությամբ հարկադիր աճուրդների կազմակերպման դեպքերի» բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Սույն օրենքը չի տարածվում կատարողական վարույթներով անցկացվող հարկադիր աճուրդների վրա:»:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «հարկադիր և» բառերը:

Հոդված 3. Օրենքի 4-րդ գլուխն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 35.5-րդ հոդվածի 1-ին մասից հանել «, բացառությամբ հարկադիր էլեկտրոնային աճուրդների» բառերը:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:~~2025 թվականի հուլիսի 1-ից:~~

2. Հարկադիր (էլեկտրոնային) աճուրդն անցկացվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 4-րդ գլխի կանոններով, եթե հարկադիր (էլեկտրոնային) աճուրդն անցկացվում է այնպիսի կատարողական վարույթով, որի նկատմամբ, ըստ «Կատարողական վարույթի մասին» օրենքի անցումային դրույթների, կիրառվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքը: